ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-960-11.11.2024-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 62-րդ հոդվածի 6-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Սույն մասի դրույթները փաստաբանական գործունեություն իրականացնող ԱԱՀ վճարողների կողմից օրենքով սահմանված կարգով մատուցվող անվճար իրավաբանական ծառայությունների (կամավոր անհատույց իրավաբանական օգնության) հարկման բազայի նկատմամբ չեն կիրառվում, եթե այդ ծառայությունների՝ սույն մասով սահմանված կարգով որոշված ԱԱՀ-ով հարկման բազան տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում չի գերազանցում ԱԱՀ վճարողների՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող բոլոր գործարքների մասով ԱԱՀ-ով հարկման բազայի 5 տոկոսը: Փաստաբանական գործունեություն իրականացնող ԱԱՀ վճարողների կողմից օրենքով սահմանված կարգով մատուցվող անվճար իրավաբանական ծառայությունների (կամավոր անհատույց իրավաբանական օգնության)՝ սույն մասով սահմանված կարգով որոշված ԱԱՀ-ով հարկման բազան ԱԱՀ վճարողների՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող բոլոր գործարքների մասով ԱԱՀ-ով հարկման բազայի 5 տոկոսը գերազանցելու դեպքում սույն մասի դրույթները կիրառվում են այդ չափը գերազանցող մասի նկատմամբ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 254-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին կետ.

«3.1) Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի M (ԷՄ) «Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն» բաժնում ներառվող՝ «69. Իրավաբանական և հաշվապահական գործունեություն», «70. Գլխամասային գրասենյակների գործունեություն. Կառավարման հարցերով խորհրդատվական ծառայություններ» և N (ԷՆ) «Վարչարարական և օժանդակ գործունեություն» բաժնում ներառվող՝ «78.2 Ժամանակավոր աշխատուժով ապահովման գործունեություն», «78.3 Աշխատուժով ապահովման այլ գործունեություն» գործունեություններ իրականացնողները.».

2) 6-րդ և 7-րդ մասերում «3-րդ մասի 3-րդ կետով» բառերը փոխարինել «3-րդ մասի 3-րդ և 3.1-ին կետերով» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «3-րդ,» բառից հետո լրացնել «3.1-ին,» բառը:

Հոդված 4. Օրենսգրքի 258-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Սույն հոդվածի 2-5-րդ մասերի կիրառության իմաստով՝

1) շրջանառության հարկի գումարից նվազեցվող ծախսեր (բացառությամբ սույն մասի 2-րդ կետով սահմանված դեպքերի) են համարվում տվյալ հաշվետու ժամանակաշրջանում կատարված՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 12-րդ և 13-րդ մասերով սահմանված փաստաթղթերով հիմնավորված՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման հետ անմիջականորեն կապված ծախսերը, առևտրական (առք ու վաճառքի) գործունեության առարկա հանդիսացող ապրանքների սկզբնական արժեքը, ինչպես նաև վարչական և իրացման ծախսերը: Սույն կետի կիրառության նպատակով՝

ա. հաշվետու ժամանակաշրջանում կատարված ծախսեր են համարվում տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների, ստացված ծառայությունների, ընդունված աշխատանքների գծով ծախսերը,

բ. ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման հետ անմիջականորեն կապված ծախսեր են համարվում Օրենսգրքի 121-րդ հոդվածի 7-րդ մասի երրորդ պարբերության 1-ին կետով սահմանված ծախսերը, վարչական ծախսեր են համարվում Օրենսգրքի 121-րդ հոդվածի 7-րդ մասի երրորդ պարբերության

2-րդ կետով սահմանված ծախսերը, իսկ իրացման ծախսեր են համարվում Օրենսգրքի 121-րդ հոդվածի 7-րդ մասի երրորդ պարբերության 3-րդ կետով սահմանված ծախսերը.

2) շրջանառության հարկի գումարից նվազեցվող ծախսեր չեն համարվում հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ ձեռք բերելու կամ կառուցելու կամ ստեղծելու կամ մշակելու ծախսերը, հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վրա կատարվող կապիտալ և ընթացիկ ծախսերը, հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումները, հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների լուծարման ծախսերը, անհատույց ստացված ակտիվների, աշխատանքների և ծառայությունների գծով ծախսերը, գործուղման ծախսերը, ներկայացուցչական ծախսերը, ինչպես նաև հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող հարկ վճարողների կողմից խոհարարական արտադրանք չհանդիսացող այլ ակտիվների օտարման դեպքում՝ դրանց սկզբնական արժեքը:»:

Հոդված 5. Օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասում «հաշվառում:» բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Վարչական և իրացման ծախսերի առանձնացված հաշվառում չվարելու կամ առանձնացված հաշվառում վարելը հնարավոր չլինելու դեպքում Օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակի 1-ին, 4-րդ, 6-րդ և 10-րդ կետերով սահմանված գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով շրջանառության հարկի գումարից նվազեցման ենթակա վարչական և իրացման ծախսերը հաշվարկվում են տեսակարար կշիռների մեթոդով՝ հիմք ընդունելով Օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակի 1-ին, 4-րդ, 6-րդ և 10-րդ կետերով սահմանված գործունեության յուրաքանչյուր առանձին տեսակից ձևավորվող հարկման բազայի կշիռը գործունեության բոլոր տեսակների մասով ձևավորվող իրացման շրջանառության (եկամուտների) ընդհանուր կառուցվածքում:»:

Հոդված 6. Օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետից հանել «վարչական,» բառը:

Հոդված 7. Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասում՝

1) 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին և 2.2-րդ կետեր.

«2.1) Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի M (ԷՄ) «Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն» բաժնում ներառվող՝ «70. Գլխամասային գրասենյակների գործունեություն. Կառավարման հարցերով խորհրդատվական ծառայություններ» և N (ԷՆ) «Վարչարարական և օժանդակ գործունեություն» բաժնում ներառվող՝ «78.2 Ժամանակավոր աշխատուժով ապահովման գործունեություն», «78.3 Աշխատուժով ապահովման այլ գործունեություն» գործունեություններ իրականացնողները.

2.2) միջմարզային, ներմարզային երթուղու շահագործման կամ ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) միջմարզային, ներմարզային երթուղով ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեություն իրականացնողները.»:

Հոդված 8. Օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «1-3-րդ» բառերը փոխարինել «1-2.2-րդ» բառերով:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարականը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասի:

1. Սույն օրենքի 1-ին հոդվածը տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

2. Սույն օրենքի 2-րդ, 3-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2025 թվականի հուլիսի 1-ից:

3. Սույն օրենքի 4-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածները տարածվում են 2025 թվականի հունվարի 1-ից հետո կատարվող (կատարված) վարչական և իրացման ծախսերի վրա:

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում

Կ-960-11.11.2024-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) ~~254-րդ հոդվածի՝~~

~~1) 3-րդ մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-ին կետ.~~

~~«3.1) Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության դասակարգչի «F (ԷՖ) Շինարարություն» բաժնում ներառվող՝ «41. Շենքերի շինարարություն», «42. Քաղաքացիական շինարարություն», «43. Մասնագիտացված շինարարական գործունեություն», «L (ԷԼ) Անշարժ գույքի հետ կապված գործունեություն» բաժնում ներառվող՝ «68.3 Անշարժ գույքի հետ գործառնություններ վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով», «M (ԷՄ) Մասնագիտական, գիտական եւ տեխնիկական գործունեություն» բաժնում ներառվող՝ «69. Իրավաբանական եւ հաշվապահական գործունեություն», «70. Գլխամասային գրասենյակների գործունեություն. Կառավարման հարցերով խորհրդատվական ծառայություններ», «71. Ճարտարապետական եւ ճարտարագիտական գործունեություն. Տեխնիկական փորձարկումներ եւ վերլուծություններ», «73. Գովազդային գործունեություն եւ շուկայի իրավիճակի հետազոտություն», «74. Մասնագիտական, գիտական եւ տեխնիկական այլ գործունեություն», N (ԷՆ) «Վարչարարական եւ օժանդակ գործունեություն» բաժնում ներառվող՝ «78.2 Ժամանակավոր աշխատուժով ապահովման գործունեություն», «78.3 Աշխատուժով ապահովման այլ գործունեություն» եւ «Q (ՔՅՈՒ) Առողջապահության եւ բնակչության սոցիալական սպասարկում» բաժնում ներառվող՝ «86. Առողջապահություն» գործունեություններ իրականացնողները.».~~

~~2) 6-րդ եւ 7-րդ մասերում «3-րդ մասի 3-րդ կետով» բառերը փոխարինել «3-րդ մասի 3-րդ եւ 3.1-ին կետերով» բառերով:~~

62-րդ հոդվածի 6-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Սույն մասի դրույթները փաստաբանական գործունեություն իրականացնող ԱԱՀ վճարողների կողմից օրենքով սահմանված կարգով մատուցվող անվճար իրավաբանական ծառայությունների (կամավոր անհատույց իրավաբանական օգնության) հարկման բազայի նկատմամբ չեն կիրառվում, եթե այդ ծառայությունների՝ սույն մասով սահմանված կարգով որոշված ԱԱՀ-ով հարկման բազան տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում չի գերազանցում ԱԱՀ վճարողների՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող բոլոր գործարքների մասով ԱԱՀ-ով հարկման բազայի 5 տոկոսը: Փաստաբանական գործունեություն իրականացնող ԱԱՀ վճարողների կողմից օրենքով սահմանված կարգով մատուցվող անվճար իրավաբանական ծառայությունների (կամավոր անհատույց իրավաբանական օգնության)՝ սույն մասով սահմանված կարգով որոշված ԱԱՀ-ով հարկման բազան ԱԱՀ վճարողների՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող բոլոր գործարքների մասով ԱԱՀ-ով հարկման բազայի 5 տոկոսը գերազանցելու դեպքում սույն մասի դրույթները կիրառվում են այդ չափը գերազանցող մասի նկատմամբ:»:

Հոդված 2. ~~Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասում՝~~

~~1) 2-րդ կետից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2.1-ին եւ 2.2-րդ կետեր.~~

~~«2.1) Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության դասակարգչի «F (ԷՖ) Շինարարություն» բաժնում ներառվող՝ «41. Շենքերի շինարարություն», «42. Քաղաքացիական շինարարություն», «43. Մասնագիտացված շինարարական գործունեություն», «L (ԷԼ) Անշարժ գույքի հետ կապված գործունեություն» բաժնում ներառվող՝ «68.3 Անշարժ գույքի հետ գործառնություններ վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով», «M (ԷՄ) Մասնագիտական, գիտական եւ տեխնիկական գործունեություն» բաժնում ներառվող՝ «69. Իրավաբանական եւ հաշվապահական գործունեություն», «70. Գլխամասային գրասենյակների գործունեություն. Կառավարման հարցերով խորհրդատվական ծառայություններ», «71. Ճարտարապետական եւ ճարտարագիտական գործունեություն. Տեխնիկական փորձարկումներ եւ վերլուծություններ», «73. Գովազդային գործունեություն եւ շուկայի իրավիճակի հետազոտություն», «74. Մասնագիտական, գիտական եւ տեխնիկական այլ գործունեություն», N (ԷՆ) «Վարչարարական եւ օժանդակ գործունեություն» բաժնում ներառվող՝ «78.2 Ժամանակավոր աշխատուժով ապահովման գործունեություն», «78.3 Աշխատուժով ապահովման այլ գործունեություն», եւ «Q (ՔՅՈՒ) Առողջապահության եւ բնակչության սոցիալական սպասարկում» բաժնում ներառվող՝ «86. Առողջապահություն» գործունեություններ իրականացնողները.~~

~~2.2) ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) միջմարզային, ներմարզային երթուղով ուղեւորափոխադրումների կազմակերպման գործունեություն իրականացնողները.»։~~

Օրենսգրքի 254-րդ հոդվածի՝

3) 3-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին կետ.

«3.1) Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի M (ԷՄ) «Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն» բաժնում ներառվող՝ «69. Իրավաբանական և հաշվապահական գործունեություն», «70. Գլխամասային գրասենյակների գործունեություն. Կառավարման հարցերով խորհրդատվական ծառայություններ» և N (ԷՆ) «Վարչարարական և օժանդակ գործունեություն» բաժնում ներառվող՝ «78.2 Ժամանակավոր աշխատուժով ապահովման գործունեություն», «78.3 Աշխատուժով ապահովման այլ գործունեություն» գործունեություններ իրականացնողները.».

6-րդ և 7-րդ մասերում «3-րդ մասի 3-րդ կետով» բառերը փոխարինել «3-րդ մասի 3-րդ և 3.1-ին կետերով» բառերով:

Հոդված 3. ~~Օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «1-3-րդ» բառերը՝ փոխարինել «1-2.2-րդ» բառերով:~~ Օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «3-րդ,» բառից հետո լրացնել «3.1-ին,» բառը:

Հոդված 4. Օրենսգրքի 258-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Սույն հոդվածի 2-5-րդ մասերի կիրառության իմաստով՝

1) շրջանառության հարկի գումարից նվազեցվող ծախսեր (բացառությամբ սույն մասի 2-րդ կետով սահմանված դեպքերի) են համարվում տվյալ հաշվետու ժամանակաշրջանում կատարված՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 12-րդ և 13-րդ մասերով սահմանված փաստաթղթերով հիմնավորված՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման հետ անմիջականորեն կապված ծախսերը, առևտրական (առք ու վաճառքի) գործունեության առարկա հանդիսացող ապրանքների սկզբնական արժեքը, ինչպես նաև վարչական և իրացման ծախսերը: Սույն կետի կիրառության նպատակով՝

ա. հաշվետու ժամանակաշրջանում կատարված ծախսեր են համարվում տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների, ստացված ծառայությունների, ընդունված աշխատանքների գծով ծախսերը,

բ. ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման հետ անմիջականորեն կապված ծախսեր են համարվում Օրենսգրքի 121-րդ հոդվածի 7-րդ մասի երրորդ պարբերության 1-ին կետով սահմանված ծախսերը, վարչական ծախսեր են համարվում Օրենսգրքի 121-րդ հոդվածի 7-րդ մասի երրորդ պարբերության 2-րդ կետով սահմանված ծախսերը, իսկ իրացման ծախսեր են համարվում Օրենսգրքի 121-րդ հոդվածի 7-րդ մասի երրորդ պարբերության 3-րդ կետով սահմանված ծախսերը.

2) շրջանառության հարկի գումարից նվազեցվող ծախսեր չեն համարվում հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ ձեռք բերելու կամ կառուցելու կամ ստեղծելու կամ մշակելու ծախսերը, հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վրա կատարվող կապիտալ և ընթացիկ ծախսերը, հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումները, հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների լուծարման ծախսերը, անհատույց ստացված ակտիվների, աշխատանքների և ծառայությունների գծով ծախսերը, գործուղման ծախսերը, ներկայացուցչական ծախսերը, ինչպես նաև հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող հարկ վճարողների կողմից խոհարարական արտադրանք չհանդիսացող այլ ակտիվների օտարման դեպքում՝ դրանց սկզբնական արժեքը:»:

Հոդված 5. Օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասում «հաշվառում:» բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Վարչական և իրացման ծախսերի առանձնացված հաշվառում չվարելու կամ առանձնացված հաշվառում վարելը հնարավոր չլինելու դեպքում Օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակի 1-ին, 4-րդ, 6-րդ և 10-րդ կետերով սահմանված գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով շրջանառության հարկի գումարից նվազեցման ենթակա վարչական և իրացման ծախսերը հաշվարկվում են տեսակարար կշիռների մեթոդով՝ հիմք ընդունելով՝ Օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակի 1-ին, 4-րդ, 6-րդ և 10-րդ կետերով սահմանված գործունեության յուրաքանչյուր առանձին տեսակից ձևավորվող հարկման բազայի կշիռը գործունեության բոլոր տեսակների մասով ձևավորվող իրացման շրջանառության (եկամուտների) ընդհանուր կառուցվածքում:»:

Հոդված 6. Օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետից հանել «վարչական,» բառը:

Հոդված 7. Օրենսգրքի 267-րդ հոդվածի 5-րդ մասում՝

2)2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին և 2.2-րդ կետեր.

«2.1) Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի M (ԷՄ) «Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն» բաժնում ներառվող՝ «69. Իրավաբանական և հաշվապահական գործունեություն», «70. Գլխամասային գրասենյակների գործունեություն. Կառավարման հարցերով խորհրդատվական ծառայություններ» և N (ԷՆ) «Վարչարարական և օժանդակ գործունեություն» բաժնում ներառվող՝ «78.2 Ժամանակավոր աշխատուժով ապահովման գործունեություն», «78.3 Աշխատուժով ապահովման այլ գործունեություն» գործունեություններ իրականացնողները.

2.2) միջմարզային, ներմարզային երթուղու շահագործման կամ ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) միջմարզային, ներմարզային երթուղով ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեություն իրականացնողները.»:

Հոդված 8. Օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «1-3-րդ» բառերը փոխարինել «1-2.2-րդ» բառերով:

~~***Հոդված 5.*** Եզրափակիչ մաս~~

~~1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հուլիսի 1-ից:~~

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարականը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասի:

4. Սույն օրենքի 1-ին հոդվածը տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

5. Սույն օրենքի 2-րդ, 3-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2025 թվականի հուլիսի 1-ից:

6. Սույն օրենքի 4-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածները տարածվում են 2025 թվականի հունվարի 1-ից հետո կատարվող (կատարված) վարչական և իրացման ծախսերի վրա:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-960-11.11.2024-ՏՀ-011/1) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ՀՕ-285-Ն ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-960[1]-11.11.2024-ՏՀ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Հոդված 10.

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունիսի 12-ի ՀՕ-285-Ն օրենքում լրացումներ կատարելու մասին» (Կ-960[1]-11.11.2024-ՏՀ-011/1) օրենքի նախագիծ	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունիսի 12-ի ՀՕ-285-Ն օրենքը 2025 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել, նշյալ նախագծով առաջարկվող կարգավորումները հնարավոր է սահմանել միայն Հարկային օրենսգրքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու ճանապարհով: Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկվում է նշյալ օրենքի նախագիծը հանել շրջանառությունից	Ընդունվել է: «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունիսի 12-ի ՀՕ-285-Ն օրենքում լրացումներ կատարելու մասին» (Կ-960[1]-11.11.2024-ՏՀ-011/1) օրենքի նախագիծը հանվել է շրջանառությունից և դրանով սահմանված կարգավորումները նախատեսվել են «Հայաստանի	Ընդունվել է:

			և դրանով սահմանված կարգավորումները նախատեսել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (Կ-960-11.11.2024-ՏՀ-011/1) օրենքի նախագծում:	Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (Կ-960-11.11.2024-ՏՀ-011/1) օրենքի նախագծում նոր 4-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածներ լրացնելու միջոցով:	
2.	ՀՀ կառավարություն	**Նոր հոդված**	Առաջարկվում է փաստաբանական գործունեություն իրականացնող ԱԱՀ վճարողների կողմից անվճար իրավաբանական ծառայությունների մատուցման դեպքում Հարկային օրենսգրքի 62-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ԱԱՀ-ով հարկման բազայի որոշման առանձնահատուկ կարգավորումը կիրառել որոշակի բացառություններով:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում նոր՝ 1-ին հոդված լրացնելու միջոցով:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին և 3-րդ հոդվածներ	Առաջարկվում է շրջանառության հարկի և միկրոձեռնարկատիրության հարկման համակարգերում սահմանափակել միայն Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի Մ (ԷՄ) «Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն»	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ (2-րդ և 7-րդ հոդվածներ):	Ընդունվել է:

			բաժնում ներառվող՝ «69. Իրավաբանական և հաշվապահական գործունեություն», «70. Գլխամասային գրասենյակների գործունեություն. Կառավարման հարցերով խորհրդատվական ծառայություններ» և N (ԷՆ) «Վարչարարական և օժանդակ գործունեություն» բաժնում ներառվող՝ «78.2 Ժամանակավոր աշխատուժով ապահովման գործունեություն», «78.3 Աշխատուժով ապահովման այլ գործունեություն» գործունեությունների իրականացումը:		
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ և 4-րդ հոդվածներ	Առաջարկվում է նշյալ հոդվածների համարակալումը վերանայել:	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ (3-րդ և 8-րդ հոդվածներ):	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարականը հաջորդող	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում (9-րդ հոդված):	Ընդունվել է:

			օրվանից, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասի: 1. Սույն օրենքի 1-ին հոդվածը տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա: 2. Սույն օրենքի 2-րդ, 3-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2025 թվականի հուլիսի 1-ից: 3. Սույն օրենքի 4-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածները տարածվում են 2025 թվականի հունվարի 1-ից հետո կատարվող (կատարված) վարչական և իրացման ծախսերի վրա:»:		